# ԿԱՐԾԻՔ
# ՄԱՐԻԱՄ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԱԿԱՐՅԱՆԻ «ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՀԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՎՐԱ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարիամ Արտավազդի Մակարյանի «Կազմակերպական մշակույթի ազդեցությունը բուհի գիտակրթական գործունեության արդյունավետության բարձրացման վրա» թեմայով ատենախոսությունը հանդիսանում է արդիական, տեսական և կիրառական նշանակություն ունեցող ինքնուրույն, ամբողջական գիտահետազոտական աշխատանք:

Ատենախոսության թեման լիովին համահունչ է ժամանակակից բարձրագույն կրթության զարգացման առաջնահերթություններին, մասնավորապես բուհերի կառավարման համակարգերի արդիականացման, գիտակրթական գործունեության արդյունավետության բարձրացման և կազմակերպական ներուժի ուժեղացման հիմնախնդիրներին: Հեղինակը հիմնավորված ձևով ցույց է տվել, որ կազմակերպական մշակույթը ոչ միայն ուղեկցող, այլև որոշիչ գործոն է բուհի ռազմավարական զարգացման և կառավարման արդյունավետության ապահովման գործընթացում:

Մարիամ Արտավազդի Մակարյանի «Կազմակերպական մշակույթի ազդեցությունը բուհի գիտակրթական գործունեության արդյունավետության բարձրացման վրա» թեկանծուական հետազոտության արդյունքները շարադրված են տրամաբանորեն փոխկապակցված և շարունակություն կազմող երեք գլխում: Ատենախոսությունը կազմված է 167 էջում ամփոփված՝ ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից, հավելվածից: Գրականության ցանկում նշված է 169 աղբյուր, որոնք արտացոլում են ատենախոսության պրոբլեմատիկան:

Ատենախոսության արդիականությունը հիմնավորված է:

Ներածության մեջ բավականին ճիշտ է կատարված արդիականության հիմնավորումը, հստակ են ձևակերպված ատենախոսության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները,

աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Հետազոտությունը հիմնավորված է պատշաճ մակարդակով:

Մեր կարծիքով, աշխատանքը տրամաբանական առումով կառուցված է ճիշտ: Հեղինակը հիմնավորել է իր կողմից որդեգրած համակարգային մոտեցումները: Նա պատշաճ հիմնավորվածությամբ ու խորությամբ ներկայացրել է ոլորտում առկա հիմնախնդիրներն ու հիմնահարցերը, հետազոտության հիմնախնդրի ակունքները, զարգացումներն ու զարգացման միտումները:

Ատենախոսությունը կազմող գլուխներում լուծված են հետազոտության խնդիրները, հիմնավորված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին «Կազմակերպական մշակույթի հասկացութային շրջանակն ու նշանակությունը բուհերի զարգացման գործընթացում» գլխում քննարկված են կկազմակերպական մշակույթի հասկացութային շրջանակի ձևավորման և զարգացման նախադրյալները, կազմակերպական մշակույթի հիմնական գործառույթներն ու բաղադրիչները բուհերում և կազմակերպական մշակույթը բուհերում. իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն:

Ատենախոսը միանգամայն ճշգրիտ եզրակացություն է կազմել գլխի ամփոփման մեջ, «բուհերում ճկուն մշակույթը կազմակերպական մշակույթի ամենանախընտրելի տեսակն է: Դրական ազդեցություն ունեցող կազմակերպական մշակույթը կարող է բարձրացնել բուհի արտադրողականությունը և նաև դյուրին դարձնել ղեկավարների հետ աշխատանքը: Ճկուն մշակույթ ունեցող բուհը մեծ ուշադրություն է դարձնում համագործակցությանը և հաշվի է առնում իր աշխատակիցների կարիքները: Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ կազմակերպական մշակույթի այս կամ այն տեսակի նախապատվությունն այնքան էլ կարևոր չէ, կարևոր է, որ այն միտված լինի կրթությունը ավելի որակյալ դարձնելուն և շրջանավարտների մասնագիտական գիտելիքները, հմտությունները և կարողություններն աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխանեցնելուն, ռազմավարական մոտեցումները բուհի առաքելությանը ծառայեցնելուն և այլն: Կազմակերպական մշակույթը հսկայական ազդեցություն ունի բուհի աշխատողների վարքագծի և կատարողականի բարելավման գործընթացներում:»

Երկրորդ «Կազմակերպական մշակույթի և բուհի գիտակրթական գործունեության փոխկապակցվածություն» գլխում դիտարկված են տրամաբանական հաջորդականություն կազմող երեք հարցեր՝ բուհերում կազմակերպական մշակույթի ազդեցությունը ինստիտուցիոնալ գիտելիքի կառավարման արդյունավետության բարձրացման վրա, բուհերում կազմակերպական մշակույթի ազդեցությունը ռազմավարական կառավարման արդյունավետության բարձրացման վրա, բուհերում կազմակերպական մշակույթի ազդեցությունը պրոֆեսորադասախոսական կազմի գիտակրթական գործունեության և ուսանողների ուսումնառության առաջընթացի վրա:

Ատենախոսը գտնում է, որ ռազմավարության մշակման և իրականացման գործընթացներում շատ մեծ է պրոֆեսորադասախոսական կազմի դերը, որը ցանկացած բուհի ակադեմիական միջավայրի հենասյունն է: Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների միջև հետադարձ կապի ապահովման մեխանիզմները կարող են մեծ ազդեցություն ունենալ հաստատության ռազմավարական ուղղությունների սահմանման, փոփոխման ու զարգացման վրա:

Հետազոտության արդյունքում հանգել է շատ կարևոր եզրակացության «բուհերում կազմակերպական մշակույթը հանդես է գալիս որպես հիմնարար միջավայրային գործոն, որը համակարգային ձևով ազդում է ինչպես պրոֆեսորադասախոսական կազմի գիտակրթական գործունեության արդյունավետության, այնպես էլ ուսանողների ուսումնառության առաջընթացի վրա: Բուհերում այնպիսի մշակույթը, որը խթանում է ակադեմիական ազատությունը, համագործակցությունը, նորարարությունը և մասնագիտական զարգացումը, նպաստում է պրոֆեսորադասախոսական կազմի մոտիվացիայի բարձրացմանը, գիտահետազոտական ակտիվության աճին և ուսուցման որակի բարելավմանը: Միաժամանակ, կազմակերպական մշակույթը ազդեցություն է ունենում նաև ուսանողների ուսումնառության առաջընթացի վրա՝ ձևավորելով ուսումնական միջավայրի որակը: Աջակցող, վստահելի և ուսանողակենտրոն մշակույթը նպաստում է դասավանդման մեթոդների կատարելագործմանը, հետադարձ կապի

արդյունավետությանը, ուսանողների ներգրավվածության բարձրացմանը և ակադեմիական մոտիվացիայի աճին»:

Երրորդ «ՀՀ բուհերում կազմակերպական մշակույթի զարգացման նախադրյալները» գլխում վերլուծված և հետազոտված են ՀՀ բուհերում կազմակերպական մշակույթի ազդեցությունը պրոֆեսորադասախոսական կազմի գիտակրթական գործունեության և ուսանողների ուսումնառության առաջընթացի վրա, ՀՀ բուհերում կազմակերպական մշակույթի ձևավորման և զարգացման օրենսդրական նախադրյալները, ՀՀ բուհերում կազմակերպական մշակույթի ռազմավարական կառավարման մոտեցումները և ներկայացված է ատենախոսի մշակած ՀՀ բուհերում կազմակերպական մշակույթի կառավարման մոդելը:

Ատենախոսը գլուխը կազմող ենթագլուխներում հիմնավորում է, որ բուհի կազմակերպական մշակույթի կառավարման մոդելի արդյունավետությունը կախված է նրանից, թե որքանով են կազմակերպական մշակույթը, ռազմավարությունը և գիտակրթական գործունեությունը համադրված և փոխկապակցված, որքանով են բուհերի շահակիցները համագործակցում և աջակցում կազմակերպական մշակույթի բարելավմանը, և որքանով են բուհերը կարողանում իրենց զարգացման ռազմավարություններում ինտեգրել արտաքին միջավայրի գործոնների փոփոխությունները: Այդ պարագայում բուհերը կարող են ձևավորել կայուն, շարունակաբար զարգացող միջավայր, որտեղ յուրաքանչյուր շահակից ակտիվորեն մասնակցում է բարելավման գործընթացներին և նորարարական նախաձեռնությունների իրականացման:

Ատենախոսի մշակած մոդելն իր փուլային կառուցվածքով նպաստում է կայուն և շարունակաբար զարգացող կազմակերպական մշակույթի ձևավորմանը, որը հիմնված կլինի վստահության, համագործակցության, բաց հաղորդակցության և զարգացման վրա: Այսպիսի մոտեցումն անչափ կարևոր է այն համատեքստում, երբ բուհերը գործում են այնպիսի արտաքին միջավայրում, որը մշտապես փոփոխվում է պայմանավորված տեխնոլոգիական արագընթաց զարգացումներով, աշխատաշուկայի պահանջների և

ուսանողների կարիքների փոփոխություններով, կրթական միջազգային չափանիշների խստացմամբ:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ համապարփակ կերպով ուսումնասիրվել են ՀՀ բուհերի կազմակերպական մշակույթի ձևավորման առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը գիտակրթական գործունեության արդյունավետության վրա, ինչպես նաև մշակվել է կազմակերպական մշակույթի կառավարման մոդել, որն ունի տեսական հիմնավորվածություն և կիրառական ուղղվածություն: Հատկանշական է, որ առաջարկված մոդելը կառուցված է միջազգային առաջավոր փորձի համադրման և տեղայնացման սկզբունքով, ինչը բարձրացնում է դրա կիրառելիությունը ՀՀ կրթական համակարգում:

Ատենախոսությունում կիրառված մեթոդաբանական գործիքակազմը (տեսական վերլուծություն, վիճակագրական մշակում, հարցաթերթիկային հետազոտություն) համարժեք է առաջադրված նպատակներին և ապահովում է ստացված արդյունքների գիտական հավաստիությունը: Հատկապես արժեքավոր է մեծածավալ էմպիրիկ նյութի ներգրավումը (ՊԴ կազմի և ուսանողների մասնակցությամբ), որը հնարավորություն է տվել հիմնավորել տեսական դրույթները փաստական տվյալներով:

Ատենախոսության տեսական նշանակությունը դրսևորվում է կազմակերպական մշակույթի վերաբերյալ գիտական մոտեցումների համակարգման և բուհական համատեքստում դրանց վերաիմաստավորման մեջ: Գործնական նշանակությունն արտահայտվում է առաջարկված մոդելի և եզրակացությունների կիրառելիությամբ՝ բուհերի կառավարման համակարգերի կատարելագործման, ռազմավարական պլանավորման և մարդկային ռեսուրսների զարգացման գործընթացներում:

Աշխատանքը կառուցվածքային առումով տրամաբանական է, շարադրանքը՝ գիտական, հիմնավորված և հետևողական: Ներկայացված դրույթները փաստարկված են, եզրակացությունները՝ բխում են հետազոտության բովանդակությունից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է սեղմագրում և հեղինակի գիտական աշխատանքներում:

Ատենախոսը հետազոտական ծրագիրն իրագործել է գիտական պատշաճ մակարդակով: Ատենախոսությունն աչքի է ընկնում խորը վերլուծությամբ, դրված և լուծված խնդիրներով:

Ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական գիտական հետազոտությանն առաջադրվող հիմնական պահանջներին, շարադրման ոճը, լեզուն գիտական ակադեմիական տեսակետից միանգամայն ընդունելի է:

Այսպիսով, Մարիամ Արտավազդի Մակարյանի «Կազմակերպական մշակույթի ազդեցությունը բուհի գիտակրթական գործունեության արդյունավետության բարձրացման վրա» թեմայով ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտամանկավարժական աշխատանք է: Ատենախոսությունն աչքի է ընկնում թեմայի հիմնավորվածությամբ, արդիականությամբ, հետազոտության բովանդակությամբ, դրված խնդիրների լուծման արդյունավետությամբ, նորույթը կասկած չի հարուցում:

Այդուամենայնիվ, ատենախոսությունը զերծ չէ մասնակի թերություններից՝

1. առանձին հատվածներում զգացվում են տեսական վերլուծության որոշակի ընդհանրացվածություն կամ միջազգային համեմատականների առավել խորացման անհրաժեշտություն,
2. հաստակ ներկայացված չէ թե առաջարկված մոդելը ինչո՞վ է տարբերվում միջազգային առկա մոդելներից,
3. հաստակ ներկայացված չէ թե ի՞նչ մեթոդներով է ստուգվել մոդելի արդյունավետությունը և կա՞ արդյոք փորձարարական հաստատում,
4. պարզորոշ նշված չէ որո՞նք են այն կոնկրետ կառավարման գործիքները, որոնք բուհերը կարող են անմիջապես կիրառել առաջարկված մոդելի հիման վրա:

Սակայն, այդ թերություններն ու բացթողումները ունեն մասնավոր բնույթ և չեն կարող ազդել ատենախոսության իրական գիտական արժեքի վրա:

Այսպիսով, Մարիամ Արտավազդի Մակարյանի «Կազմակերպական մշակույթի ազդեցությունը բուհի գիտակրթական գործունեության արդյունավետության բարձրացման վրա» խորագրով ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուական

ատենախոսությունը բավարարում է ՀՀ գիտական աստիճանների շնորհման կանոնակարգի 7–րդ կետի պահանջները, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ս.Ս. ՍՈՂՈՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ Ս.Ս. ՍՈՂՈՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

**27.05.2026թ.**